

Ֆինանսական և ոչ ֆինանսական հատվածների ավելացված արժեքներն ըստ ենթահատվածների

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Ոչ ֆինանսական և ֆինանսական հատվածների ավելացված արժեքներն ըստ ենթահատվածների
0.2	Ոլորտը	Ազգային հաշիվներ, համախառն ներքին արդյունք
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին Բաժնի պետ Լուսյա Խաչատրյան, Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 52 39 96 Էլ. փոստ՝ lusya@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	Հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների համակարգի հիմնական ցուցանիշների հաշվարկումը և սահմանված կարգով մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների վերաբերյալ արժանահավատ և վստահելի տեղեկատվության ներկայացումը: Հայաստանի Հանրապետությունում ԱՀՀ-93-ի ամբողջական ներդրման նպատակով Եվրամիության SUՄԻՍ ծրագրի համագործակցության շրջանակում Հունգարիայի կենտրոնական վիճակագրական բյուրոյի հետ համատեղ իրականացվել է հատվածների հաշիվների մշակումն ըստ ենթահատվածների, ինչը հանդիսանում է Հայաստանում ԱՀՀ-93-ի ամբողջական ներդրման երրորդ փուլը: Սկսած 2014թ. ՀՀ վիճակագրական կոմիտեն Հայաստանի ազգային հաշիվների վիճակագրության բնագավառում իրականացրել է մեթոդաբանական փոփոխություն՝ անցում է կատարել «Ազգային հաշիվների համակարգ 1993-ից» «Ազգային հաշիվների համակարգ 2008-ի»:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Հայաստանի ազգային հաշիվների վերաբերյալ տվյալներն ունեն օգտագործողների լայն շրջանակ: Հիմնական օգտագործողների թվում են երկրի տնտեսական քաղաքականության և տնտեսական կանխատեսման գործառնություններ իրականացնող պետական մարմինները, ինչպես նաև այլ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական, գիտակրթական, ֆինանսավարկային կազմակերպությունները, գործարար միջավայրը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն՝ վերլուծությունների, մոդելավորման և կանխատեսումների

		նպատակներով:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածն ըստ ենթահատվածների հաշվարկի իրականացման համար հիմք են ծառայում ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալները՝ առևտրային կազմակերպությունների կամ շուկայական ծառայություն մատուցող ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալի վերաբերյալ: Ֆինանսական կազմակերպությունների հատվածն ըստ ենթահատվածների հաշվարկի իրականացման համար հիմք են ծառայում ՀՀ կենտրոնական բանկից (ՀՀ ԿԲ) ստացվող տվյալները:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ուղղակի ծանրաբեռնվածություն առկա չէ:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	<p>ԱՀՀ-ն կազմված է հաջորդական, փոխկապակցված հաշիվներից, բաղկացած մի շարք դասակարգումներից, որոնք հայտնի չափով կազմում են համակարգի հիմքը և թույլ տալիս ընդգրկել ամենատարբեր շրջանակներ, այնպիսիք, ինչպիսիք են, օրինակ, կառուցվածքային միավորներն ու հատվածները: Կառուցվածքային միավորներն իրենց հիմնական գործառույթներով, վարքագծով և նպատակներով պայմանավորված, խմբավորվում են ըստ հիմնական կառուցվածքային հատվածների: ԱՀՀ-ում առանձնանում են տնտեսության հետևյալ հինգ հատվածները.</p> <ul style="list-style-type: none"> • Ոչ ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ), • Ֆինանսական կազմակերպություններ (կորպորացիաներ), • պետական կառավարման մարմիններ, • տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ (SSUՈԱԿ), • տնային տնտեսություններ: <p>Վերը թվարկած հինգ հատվածներից ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների հատվածները ստորաբաժանվում են ըստ առևտրային կազմակերպությունների կամ շուկայական ծառայություն մատուցող ոչ առևտրային կազմակերպությունների վրա վերահսկողություն իրականացնող կառուցվածքային միավորի տեսակի: Ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների հատվածները բաղկացած են երեք ենթահատվածներից՝</p> <ol style="list-style-type: none"> 1. պետական կազմակերպություններ (կորպորացիաներ),

		<p>2. ազգային մասնավոր կազմակերպություններ (կորպորացիաներ),</p> <p>3. օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող կազմակերպություններ (կորպորացիաներ):</p> <p>Համաձայն ԱՀՀ-ի մեթոդաբանության, պայմանականորեն պետք է ընդունել, որ կառուցվածքային միավորը վերահսկում է այս կամ այն կազմակերպությունն այն դեպքում, երբ դրա վերահսկողության կամ տրամադրության տակ են գտնվում կազմակերպության ավելի քան 50%-ը և ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերը (այն պայմանով, որ տվյալ կազմակերպության վերահսկման այլ ապացույցներ բացակայում են, քանի որ որոշ դեպքերում վերահսկողություն կարելի է իրականացնել վերահսկողության փաթեթի կեսից զգալի քիչ մասի ձեռքբերման դեպքում):</p> <p>Համաձայն վերը նշված մեթոդաբանության, սկսած 2000 թվականից, Հայաստանի ՀՆԱ-ի ծավալը, հիմնական գներով, տարանջատվել է նաև ըստ ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների հատվածների՝ ենթահատվածների՝ հիմնված կանոնադրական կապիտալում դրանց հիմնադիրների բաժնեմասի վերաբերյալ տեղեկատվության վրա, որը ստացվել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրից: Եթե կանոնադրական կապիտալում մասնակցել են բոլոր երեք տեսակի հիմնադիրները, ապա կառուցվածքային միավորը դասակարգվել է ըստ այն տեսակի, որն ունի ամենամեծ բաժինը կանոնադրական կապիտալում: Իսկ եթե հիմնադիրների բաժնեմասերը հավասար են (50- 50), ապա՝ պետական, պետական և ազգային մասնավոր բաժնեմասերի հավասարության դեպքում կազմակերպությունը դասակարգվել է որպես պետական, պետական և օտարերկրյա բաժնեմասերի հավասարության դեպքում՝ կազմակերպությունը դասակարգվել է որպես պետական, օտարերկրյա և ազգային մասնավոր բաժնեմասերի հավասարության դեպքում՝ կազմակերպությունը դասակարգվել է որպես օտարերկրյա:</p> <p>Ընդգրկվում են ԱՀՀ-ում սահմանված բոլոր գործառնությունները: Ըստ ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների ենթահատվածների (պետական, ազգային մասնավոր և օտարերկրյա) համախառն ավելացված արժեքի ծավալները ներառում են բոլոր շուկայական գործառնությունները, ներառյալ ապրանքափոխանակությունը:</p> <p>Ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տնտեսությունը:</p> <p>Համախառն ավելացված արժեքն ըստ ենթահատվածների կազմվում է ընթացիկ գներով:</p>
1.2	Վիճակագրական հասկացություններ	Հայաստանի Ազգային հաշիվները կազմվում են համաձայն Ազգային հաշիվների համակարգի հիմնարար դասակարգումների,

սահմանումների և հասկացությունների, ինչպես նաև այլ մեթոդաբանական հիմքերի, միաժամանակ շարունակելով աշխատանքը Եվրոպական հաշիվների համակարգ (ԵՀՀ) 2010-ի ներդրման ուղղությամբ:

Կառուցվածքային միավորներ են հանդիսանում տնտեսական այն միավորները, որոնք ընդունակ են տիրապետել ակտիվներին և իրենց անունից ստանձնել պարտավորություններ: Դրանք կարող են զբաղվել գործառնությունների բոլոր տեսակներով և տնտեսական գործունեության բոլոր տեսակետներից հանդիսանալ որոշումներ ընդունելու կենտրոններ: Կախված իրենց հիմնական գործառնություններից, վարքից և նպատակից, կառուցվածքային միավորները խմբավորվում են ըստ հիմնական կառուցվածքային հատվածների: Հատվածն իրենից ներկայացնում է իրագործվող գործառնությունների և ֆինանսավորման աղբյուրների տեսանկյունից միատարր կառուցվածքային միավորների համակցություն:

Ոչ ֆինանսական կազմակերպությունները կառուցվածքային միավորներ են, որոնք գլխավորապես զբաղվում են շուկայական ապրանքների և ոչ ֆինանսական ծառայությունների արտադրությամբ:

Ֆինանսական կազմակերպությունները կառուցվածքային միավորներ են, որոնք հիմնականում զբաղվում են ֆինանսական միջնորդությամբ կամ օժանդակ ֆինանսական գործունեությամբ:

Պետական կառավարման մարմինները կառուցվածքային միավորներ են, որոնք իրենց քաղաքական գործառնությունների իրականացմանը և տնտեսության կարգավորման դերին զուգընթաց, արտադրում են առավելապես ոչ շուկայական ծառայություններ՝ անհատական կամ կոլեկտիվ սպառման համար, ինչպես նաև վերաբաշխում են եկամուտներն ու հարստությունը:

Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններն իրավաբանական անձինք են, որոնք գլխավորապես զբաղվում են տնային տնտեսությունների համար ոչ շուկայական ծառայությունների արտադրությամբ: Դրանց կարգավիճակը թույլ չի տալիս այդ կազմակերպությունները գրանցող միավորների համար լինել եկամտի, շահույթի կամ այլ ֆինանսական շահի աղբյուր: Այդ կազմակերպությունների հիմնական միջոցները գոյանում են տնային տնտեսությունների կամավոր մուծումներից:

Տնային տնտեսություններն անձանց ոչ մեծ խումբ է, որոնք բնակվում են միևնույն կացարանում, միավորում իրենց հարստությունը և

		Եկամուտը կամ դրա մի մասը, և որոնք միասին սպառում են ապրանքների և ծառայությունների որոշ տեսակներ, հիմնականում՝ կացարանը և սննդամթերքը: Տնային տնտեսությունների հատվածում ներառված միավորները մասնակցում են արտադրությանը՝ տրամադրելով իրենց աշխատուժը և ձեռք են բերում ապրանքներ և ծառայություններ՝ շուկայում:
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Տարեկան տվյալների համար հաշվետու ժամանակահատվածը օրացուցային տարին է:
2.2	Հրապարակման ամսաթիվը	Համախառն ավելացված արժեքի տվյալներն ըստ ֆինանսական և ոչ ֆինանսական հատվածների ավելացված արժեքների ենթահատվածների հրապարակվում են հաշվետու տարվան հաջորդող տարվանից հետո հունիսին, իսկ ամբողջական հաշիվները՝ չորրորդ եռամսյակում:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերի հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Տարեկան՝ ըստ ամբողջ տնտեսության, այնպես էլ՝ ֆինանսական և ոչ ֆինանսական հատվածներն ըստ ենթահատվածների:
3. Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Մի շարք վիճակագրական ցուցանիշների գծով իրականացվում են չդիտարկվող տնտեսության, այդ թվում նաև «ստվերային» տնտեսության (առանց անօրինական գործունեության) լրահաշվարկներ: Կիրառվում են նաև անուղղակի մակրոտնտեսական մեթոդներ՝ օգտագործելով տարբեր տեղեկատվական աղբյուրներ:
3.2	Անճշտության աղբյուրները	Ազգային հաշիվներում տվյալների հնարավոր անճշտությունը կապված է տարբեր աղբյուրներից ստացվող տվյալների անհամապատասխանության հետ:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	
4. Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Այն դեպքերում, երբ իրականացվում են մեթոդաբանական կամ այլ բնույթի փոփոխություններ, համապատասխան հրապարակումներում տրվում է այդ փոփոխությունների ծանոթագրությունները, ինչպես նաև ներկայացվում նախորդ տարիների համար հաշվարկված (վերանայված) շարքեր:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Հայաստանի Ազգային հաշիվները կազմվում են համաձայն Ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ-2008) հիմնարար դասակարգումների, սահմանումների և հասկացությունների, ինչպես նաև այլ մեթոդաբանական հիմքերի, միաժամանակ շարունակելով աշխատանքը Եվրոպական հաշիվների համակարգ (ԵՀՀ) 2010-ի ներդրման ուղղությամբ:

4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Համախառն ավելացված արժեքն ըստ ֆինանսական և ոչ ֆինանսական հատվածների ավելացված արժեքի ենթահատվածների կազմվում են ՀՆԱ-ի տարեկան վերջնական հաշվետու տվյալների հիման վրա:
5. Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	<p>Հրապարակումներ Ամսական հրապարակում</p> <p>«Հայաստանի Հանրապետության սոցիալ- տնտեսական վիճակը հունվար-մայիսին» տեղեկատվական ամսական զեկույց (հայերեն և ռուսերեն):</p> <p>Տվյալների բազաներ http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</p> <p>Ինտերնետային հասցե Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով. http://www.armstat.am/am/?nid=82</p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Բոլոր հրապարակումները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով:
5.3	Փաստաթղթավորումը	Ցուցանիշների վերաբերյալ հակիրճ մեթոդաբանական պարզաբանումները հրապարակվում են թեմատիկ հրապարակումներում:
5.4	Այլ տեղեկատվություն	Այլ տեղեկատվություն առկա չէ:
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=672: